

զրեց Կաթողիկոս և ուղարկեց Վ. բաստան։
Եւ եր. 215, տող 4, կըդրէ թէ « մեր
Կաթողիկոսները ունեին առաջ Վ. բաց
ազգի Կաթողիկոսներ ձեռնադրելու ար-
տօնութիւնը խսկըքանէ նորանց կռապաշ-
տութիւնից դառնալուց մինչև նորանց
Ավերիոն կաթողիկոսը իրը 200 տարի, :
Երրոր վերջումը պիտի խոստվանէր ճըշ-
մարտութիւնը, թէ Վ. բաց ազգի կաթո-
ղիկոսները, նորանց կռապաշտութիւնիցն
դառնալուց սկսած մինչև Ավերիոնը, ձեռ-
նադրութիւնն այսոց կաթողիկոսներէն, ու-
րեմն ընչու է ուրանում, որ նոյցամիլրտող-
ները այսատանէն եկած եպիսկոպոսները
և քահանայքն են, և եպիսկոպոսութեան
աթոռը սուրբ Լուսաւորիչն է հաստատել
և ոչ թէ Յոյնք։ Որ այն ժամանակ Կոս-
տանղիանոս կռապաշտ էր։

Եր. 77, տող 13. « Բայց սուրբն Մես-
րոսպ երբ Ա. Պոլսից յետ էր գալիս, թողաւ
այն տեղ իւր աշակերտներին, որ լաւ վարժ-
ւին Յունաց լեզումը, այն տեղ մնացին
նոքա իրը տասը տարի, մինչև Եփեսոսի
ժողովի աւարտութիւն. 431 թուին միարա-
նական թուղթ առան մի քանի եպիսկո-
պոսներէն որ այերը զգուշանան Կեսոն-
րի մոլորութիւնն է . . . և դարձան այսա-
տան։ :

Պատմութիւնն այսպէս է ուսուցանում
(Խոր. զիբք Գ. զլ. ՞ՕՇ), թէ Ենասովե-
սո զօրավարը արգելեց աշակերտաց բազ-
մութիւնը Մելիտենէ քաղաքում Եկակ
եպիսկոպոսի մօտ. և միայն զՄեսրոսպ և
զՎարդան է ուղարկում Ա. Պոլս կայսեր
մօտ։ Խոկ Գ. Ա. ասէ, որ սուրբն Մեսրոսպ
և Ասհակ ուղարկում են Ա. Պոլս մի
քանի աշակերտներ թարգմանութեան հա-

մար (425թ). Երբ վերադառնում են
Յունաց բաժնեն Պարսից բաժինը, բե-
րումն Եփեսոսի ժողովի վճիռը 431թ.
որք այն տեղ մնումն 6 տարի։

(Մատուցեան է յետուքայ, ահապէտն)

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ՏԵՂԵԿԱԳԻՐ

Պ. ԲՐԱՄԵՒ ԳԱՎԱԴԱՍԵՐԻՆ ԹԱՐԴՄԱՆԱՄ
ԹՈՎԱՄԱՍ ԱՐԺՐՈՒՆԻՈՑ ՏԵՍՆԵՐՈՐԴ ԴԱ-
ՐՈՒՄ ԳՐԱԴ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՅ (*)։

Վերջին տարիներս այկական մատե-
նագրութիւնը հարատացաւ պատմական
շատ նշանաւոր հրատարակութիւններով։

Եյս հրատարակութիւններից քանիք
առաջին անգամ հրատարակուեցան, այլք
կրկին անգամ, ոմանք բանաւոր քննու-
թիւններ են բովանդակում, իսկ այլք
Խաչակրաց արշաւանաց վերաբերեալ մե-
ծահատոր քաղուածոյք են կազմում և
Ֆնացեալք Լատանիներէն և Գաղղթարէն
բազմաթիւ թարգմանութիւններ են։

Առաջին դարուց, այն է Վերուբնա
կամ Լարուբնիս պատմագրից սկսեալ
մինչև Ըստքել պատմագիրը կամ մեր
թուականի տասնեեօթներորդ դարը, առ-
հասարակ այ պատմագրաց թիւը հա-
սանում է երեսնի չափ և բաժնեւում է
երեք դասակարգութեան, առաջին դա-
սակարգին պատկանում են չետեւեալ պատ-
մագիրները, Եւսեբիոս, Ըստքեկ, Ամմու-

(*) Mélanges Asiatiques tirés du Bulletin, de l'Académie Imperiale des sciences de St-Petersbourg. Tome VI. livraison 2 p. 226—233.

էլ Ընեցի, Միքայէլ Սոորի, Վարդան, Միհմար Այրիվանեցի՝ որոնք տիեզերական պատմութեան վերայ են խօսում։ Երրորդ դասակարգին պատկանում են Մովսէս Խորենացի, Փաւստոս Բիւզանդացի, Յովհաննէս Կաթուղիկոս, Մատթէոս Նշղեսացի և նորա յաջորդ մատենագիրն, որոնք ամբողջ Հայաստանի պատմութեան վերայ են խօսում։ Երրորդ դասակարգին պատկանում են Թռովմաս Երծրունի, Ատեփաննոս Միւնեցի, Վահրամ և Ամբատ սպարապետն՝ որոնք Հայաստանի մի մասի կամ մի ցեղի պատմութեան վերայ են խօսում։

Եյս Մատենադրաց մէջ Պատմական դիտութեան ամենակարևոր ծառայութիւն է մատուցեր Կեսարիոյ Յոյն եպիսկոպոսը զոր ես Հայոց կարգն եմ զասում։ Վասն զի նա թէև Յոյն էր ազգաւ, բայց նորա զրուածքը, ինչպէս երեւում է իւր սկզբնական ձևով է պահպանուած առ մեզ ամբողջապէս Հայ թարդմանչք մի ձեռօք, իսկ թարդմանիչը շատ հաւանական է որ Մովսէս Խորենացին լինի։ Նշուերիոսի ժամանակադրական պատմութեան (Քրոնիկոնի) արժանաւորութիւնքը կայանում են առաջին յայնմ՝ որ Յուլիոս Կիրիկոցւյ Քրոնիկոն նորա շնորհիւն է մեր ձեռքըն հասեր, երկրորդ՝ որ իւր աշխատասիրութեան դործը եօթանասնից ժամանակադրութեան վերայ է հիմներ, որ շատ բանաւորական է քան թէ Աստուածաշնչի ուրիշ խմբագրութեան ժամանակադրութիւնը։ այդ ես յետմեծ ջանիւք և եռանդեամբ բանաքննելոյ Յունաց այն պատմական հեղինակութիւնքն, որոնք կորած են այսօր մեզ համար, և երրորդ՝ որ նա

է սահմաներ Յիսուսից 2014 տարի յառաջ Մարահամի թուականը, որ ժամանակից սկսում է Արէական ազգի ճրշմարիտ պատմութիւնը, որին շատ բնական է վերաբերել քրիստոնէութեան թուականից առաջեղած բողոք գործերը։ 1818ին Միլանում և մանաւանդ Վենետիկում երկու տպագրութիւնից յետոյ, Եւսեբիոսի բնագրի վերստին քննութեան կարօտութիւնը զգալի էր, այդ կարօտութիւնը լրացուցին 1868ին Բերլինում հրատարակած Քրոնիկոնի տպագրութեամբ հետևեալ երեք անձինք, իրենց ջանիւք և հոգատարութեամբ, ինչպէս Պ. Շիոնէ որ յանձն էր առեր Յառաջաբանի հեղինակութիւնը և ընդհանուր վերահասութիւնը, Պ. Գետերման՝ որ թարգմանութիւնը քննութեան պիտի ենթարկէր և Պ. Առեօտիկէր՝ որ բազգատութեան համար քաղուածոյք պիտի հանէր Սոորոց Քրոնիկոններից։ Եյս Պարոնայք Եւսեբիոսի աշխատասիրութեան գործի վերայ նշանաւոր յաւելուած մի արին, այդ յաւելուածն է օրբորդ դարու վերջերում Ա. Ժիրօմի ձեռօք արած Լատինական թարգմանութիւնը։ Եւսեբիոսի ժամանակագրութեան դիսաւոր յատկութիւնն այն է, որ նորա հեղինակութեան ձեռագրաց մեծ մասը Յիսուսի հօնունզը Զ տարի առաջ է դնում Քրիստոնէութեան թրւականից, այն է Տիեզերական թուականի 5198 տարում վիսանակ 5500 տարում Յուլիոս Կիրիկոցւյ ժամանակագրութեամբ։

Եյս երկու տարբույ զանազանութիւնըն ազգեցութիւնունի Անկարայոց ժամանակագրութեան վերայ, որ ըստ Եւսե-

բլուի և նորա բազմաթիւ հետեւողաց ըսկաւում է 309 թուականում Յիսուսից առաջ, փոխանակ 311. և այդպիս ահա շփոթուում է պատմութեան և ընդունւած ժամանակագրութեան մէջ եղած համաձայնութիւնը: Միքայել Եսորւոց, Երբուրֆարածի և Քար-Հիսլրայիւսի երկու Քրոնիկոնաց մէջ իրբեւ հիմն է ընդունւած 309 թուականը, և ճշմարտապիս խօսելով դա մի թեթև անկարգութիւն է միայն պատճառուում: վասն զի շատ դժուար է մոռանալ կամ ուշադրութիւն չդարձնել երկառեայ զանազանութիւնից յառաջացած մի վրիպակի վիրայ: Տայց իմ յիշատակած երեք հեղինակութեանց մէջ շատ հազեւ է պատահում Եսորւոց թուականի ի դեպ գործածութիւնը և կարելի է ասել՝ որ Եսորւոց տարիքը չեն յարմարւում երեք ոչ Հիմնիրեան և ոչ Այդկան տոմարներին:

Եւսերիոսէն յետոյ յօլինուած Տիեզե-
րական պատմութեան հաւաքածուներից
ամենաընդարձակը կազմեր է Միքայել
Ասորեոց Գատրիարքը, որոյ բնազիրը կո-
րած է: Գմբաղդաքար դորա հաւաքածոյք
լի են առասպելներով, բայց հարկ է առել
որ գտ պատմում է առանց այդ առաս-
պելներին հաւատ ընծոյելու. վասն զի ին-
քը պատմիչը բաւականին կասկածու է
եղեր: Ծակե նա իւր ժամանակազրութիւ-
նը հիմներ է Վստուածաշնչի ժամանակա-
զրութեան վերայ, բայց ինքն ևս չէ դան-
դազեր մշակել զայն յետազայ պատմա-
գիլներին հետեւելով և հասուցեր է մին-
չև իւր ժամանակը: “Այստ ժամանակա-
զրութեան մեջ գանուում են մինչև ան-
դամ Կոստանդնուպօլսոյ 5508 թուակա-

նութեան հետքերը, նմանապէս և այն
թուականները զորս ուրիշ հեղինակներից
է քաղեր, ինչպէս և Անդրսնիկոս անուն
անձանօթ մի հեղինակից։ Ասակածելի է
թուում ինձ որ Մէքայէլն ինքն եղած լի-
նի Հայկական ժամանակագրութիւնն իւր
քաղուածոց մէջ մուծանողը, վասն զի
Հայկական և Աելեկեան Տոմարների մէջ
նա երբէք մի Ճիշդ համաձայնութիւն չէ
հասաւատեր։ Միւս կողմանէ, եթէ այդ
ժամանակագրական տեղեկութիւնք աւել-
ցնողն Հայ էր, ապա ուրիշն այդ անցքե-
րը անձանօթ պիտի լինեին երկոտասանե-
րորդ գարում, եթէ ոչ՝ թշուառ ժամա-
նակագիրն այդպէս ստէպ սխալներ չէր
աներ, որոնց աւելի քան քսան տարի զա-
նազանութեանն են հասնում երեքննի։
Միիթար Այրիվանեցւոյ ժամանակագր-
ութիւնը դեռ ևս շատ անհասաւատ է
և համարձակօրին կարելի է ասել որ ոչնչէ
նշանակութիւն չունի։

Խնչպէս և իցէ անխո՞ջ և մեծավաս-
տակ Պ. Ամնղլուան, 1863ին Պ. Ենեա-
կում տպաղլուած Առուբենեանց Յիշա-
տակարան անուն դրբի Հեղինակը, քանի
մի տարբիներէ ի վեր ձեռք եր ղարկեր Վի-
քայէլի ժամանակաղլութեան բազմաթիւ
վկայութեանց թարգմանութեանը որ խա-
չակրաց արշաւանքին եր վերաբերում, այս
աշխատութեան համար շատ լու պատ-
րաստուած եր Պ. Ամնղլուան իւր միջն
դարու վերաբերեալ տեղեկութիւններով:
Բայց սակայն ես խորհուրդ չտուի նորան,
որ մատղիր եր բաժին հանել այնպիսի մի
հեղինակութիւնից, որոյ թարգմանու-
թեան թուի թէ ձեռնամուխ չեն լիներ,
եթէ նորա այն մասն որ արևմտեայց հա-

մարնոր էր՝ միանգամ հրատարակուած լիներ: Առանց չափելու իւր ֆիզկրական ուժերը, ոչ իսկ աչքի առաջ պատկերացնելով գործոյն դժուարութիւնը, առանց զարհութելու բանաքննութեան չենթարկուած և անհաստատ մի բնագրի թերութիւններից, Պ. Լանդլուան ձեռք զարկաւ այն ժամանակ Միքայէլի Քրոնիկոնի Գաղղիարէն թարգմանութեանն և զայն առաւել պարզաթափելու նպատակաւ քաղուածքներ արեց Աբուլֆարամի երկու Քրոնիկոններից, Ասսեմանի Գանձարան Ասորւոց կոչեցեալ զրուածքից, խաչակրաց արշաւանքների պատմութիւններից և ապա հրատարակեց իւր թարգմանութիւնը. բայց աւաղ, երբ աշխատութեան վերջին թերթերը տպագրութեան տակ էին, զրկուեցաւ այս գիտնական և հանձարեղ երիտասարդն իւր կենսական արեւից: Քաջ աշխատաւոր էր Լանդլուան, բայց իւր չափաղանց տշխատասիրութիւնն և եռանդու ջանքն ու փոյթը կարճեցին նորա կեանիքը և շատ վաղ յափշտակեցին զեա Հայկական ղրականութեան ծառայելուց: Ինչ եռանդով և հանձարով բարգաւաճուած պիտի լիներ Պ. Լանդլուան՝ որ միւնոյն ժամանակը հարստացնում էր իւր տեղեկութիւններով և ծանօթութիւններով Հայ Պատմիչների Գաղղիարէն թարգմանուած քաղուածոյքը, որ երկու հատորի է հասեր այսօր, և տպագրում էր Միքայէլի թարգմանութիւնը և հետաքրքիր տեղեկագիրը գերհանձարեղ, բաղմահմուտ և դժուարիւմ հեղինակի մի վերայ, որ է Գրիգոր Մագիստրոս: Յուսալի է որ Հայ պատմիչների Հայութածոյք վայրկենական մի բնոր-

հատութիւն գուցէ կրեն և որ եթէ հետեւեալ երեք հատորները գործոյն նախագծի համեմատ ի լոյս չեն դալ յաջորդեռամեայ միջոցում, գէթ Կուպար փաշայի առատաձեռնութիւնը և Պ. Գիրմէն Գիտութի դրծակցութիւնը կօգնեն Հայկարան Պ. Էվարեստ Պրիւտոմի եռանդին (*):

Այս անձինք՝ որոնք հետեւումեն պատմական մեծամեծ հրատարակութեանց, գիտեն թէ որքան նշանաւոր և բազմաթիւ տեղեկութիւններով Հայ պատմիչք հարստացուցելեն Բիւզանդիոյ, Մահմետականաց և Մոնղոլաց պատմութիւնքը.

(*) Այդ հաւաքածոյքը բովանդակում են իրենց մէջ Հայ պատմագիրների գրուածոց Գաղղիարէն թարգմանութիւնը, ուսումնական ծանօթութեամբ և պարզաբանութեամբ հանդերձ: Այդ հաւաքածուաց երկու հատորներն արդէն լոյս են տեսեր մեր անուանի Աղղայիններէն վսեմ: Նուպար փաշայի շնորհիւ. առաջինը բովանդակում է իւր մէջ այն պատմագիրների գրուածքները, որոնք թէ զրուածուած էին Յունարէն և Ասորիրէն, բայց այժմ միայն Հայերէնն է գտանուում ինչպէս Մար-Արա Կատինայի, Բարզաղանի, Ագոմանգեղոսի, Փաւստոս Բիւզանդացւոց, Վէրուրնայի և Զենոր Գլակայ թարգմանութիւնքը և Յունաց զանազան գրուածոց յօդուածներն, որոնք պահպանուած են Հայ պատմագիրների մէջ. Երկրորդ հատորը բովանդակում է իւր մէջ Կոռիւնի, Մոլէս Խորենացւոց, Եղիշէի, Դաղար Փարպեցւոց և Եղինիկ Կողբացւոց թարգմանութիւնքը:

Այս հաւաքածուաց վերսիշեալ հատորները վաճառւում են Պետերբուրգում գրալաճառ Խուկովի մատ, և իւրաքանչիւր հատորի զինն է հինգ արծաթ (5 սուրլի). զրքի վերնագիրն է Collection des historiens anciens et modernes de l'Arménie publié en Français par Victor Lanlois. Եր. թ.

այս վերջնոցս հարսաացուցիչքն են Ապրան, Ալիբակոս, Վահրամ և Ամբատ:

Երբ այս հեղինակները Արեմուտքում ընդունած ժամանակագրական թուականներն են գործ ածում, շատ սխալներ են անում ըստ մեծի մասին, իսկ երբ Հայոց թուականն են ի կիր արկանում կամ Հայոցանանում կատարուած գործողութիւններն են պատմում նոքա, ինչպէս կարելի է սպասել, աւելի լիակատար տեղեկութիւններով և աւելի ճշգիւ են կատարում իրենց պատմական գործը: Բայց մինչեւ Պ. Տիւլօրիեի Հայկական ժամանակագրութեան վերայ արած հետազօտութեանց երեխը, մեք անհնար էինք Հայկական թուականներն վերածել ի քրիստոնէականն: Թաւե իրաւամբ կարելի է կըշտամբել երեխն Պ. Կանդլուսյին, նորատարապայման շուտափոյթ շտապման և ոճոյն անուղղութեան համար, բայց այնուամենայիւ նորա ախոյեանն ևս ազատ չէ թարգմանութեան և հաշոյ մեջ կարելի վրիպակներից:

Գիտնական Հայր Պետոնդ Ամենափ 1868ին Վենետիկ հրատարակած Կարուրնիայի Արգեսիոյ ի քրիստոնէութիւն դարձի պատմութիւնը շատ հետաքրքրելի մի նորութիւն է Հայկական մատենագրութեան համար: Այս Կարուրնիան, ըստ կարծեաց զիտնական Վիսիթարեանի, Վովուկս Խորենացւոյ բոլոր հին հրատարակութեանց մեջ յիշած Պետորնիան է, որին այդ իւկ անունով յիշում են և այլ հեղինակք: Այս հեղինակն առլում էր մեր թուականի առաջին գարում, բայց ըստ հրատարակչին նորա պատմութիւնը Վասրելնից Հայերէն թարգմանելու ժա-

մանակն է ենթարկուած նշանաւոր փոփոխութեանց:

Ես սկզբում յիշատակեցի Ամուել Ընեցին, որոյ ժամանակադրական ցուցակները Եւսեբիոսի ժամանակագրութեամբ սկսուում է Յիսուսի առաջին տարուանից և հասանում է մինչև երկոտասաներորդ դարու միջին ժամանակը: 1818ին Տոկտոս Զոհրապի և Ա. Մայի հրատարակած թարգմանութիւնը լաւ է իրեւ զիտնական մի Հայի և արժանաւոր մի լեզուագէտի գործ: Եհաւասիկ որ ինչ այդ թարգմանութեան մասին կարելի է ասել: Վ.յլ թարգմանութիւնը ոչ մի աւսակ մեխնութեամբ նոյն և ոչ ժամանակագրական պարզ ծանօթութեամբ է առաջնորդուած. վասն զի այդպիսի գործի այդ կարեսը մասը, որ է ժամանակագրութիւնը, այնպէս անկարգ և շփոմուած է որ անկարելի է այդ բանում հեղինակին մեղաղրել: Վ.յլ գորա պատճառը պիտի լինի օրինակողների անհասկացողութիւնքն և սխալներն, ոյդ օրինակողներն են, որ առանց ընտրութեան, մասնաւոր իրողութեանց մասին եղած տեղեկութիւնքը վերաբերում են այնպիսի թուականների՝ որոց չեն համապատասխանում վերաբերեալ տեղեկութիւնքը: Ամուել Ընեցւոյ ցուցակներն, որ տեղեկութիւններով լի են բայց անօգուտ մի կոյտ են կազմում, հրատարակչի ակնկարութիւն ունին: “Եոյն այդ զրութեան մեջն են գտանուում և Վելքացէլ Վարույ, Աւտատանէսի և Մատթէոս Արգեսացւոյ զրուածքները: Քանի որ բնագիրը թաղուած կմնան զրադարանաց փոշեաց մեջ, զիտնական աշխարհը նոցանից կիսով չափ միայն կոտուի և

պատմազիրների մէջ իրենց ունեցած արժանաւոր աեղիցն ևս կզբկուին:

Որ ինչ թովմաս Արծրունոյն է վերաբերում, պէտք է ասել՝ որ նա Արծրունեաց մեծ ցեղի ճշմարիտ պատմազիրն և անդամն էր: Խմ նորա մասին Յիշատակարան Շ'եմարանի վեցերորդ հատորում զրած հետազոտութիւնքս բաւական ճանաչել տուին նորա պատմութեան կարեւորութիւնն և արժանաւորութիւնքն յայնըմ՝ որ խկապէս Հայաստանին և մինչև 936 թուականը Հայաստանի Մահմետականաց հետ ունեցած յարաբերութեանցըն է վերաբերում: այդ ժամանակն է, երբ կարծիք կայ թէ վախճաներ է Պատպուրականի Գաղղիկ թագաւորը: Տեղեկութեանց այս հարստութիւնը և նորա ժամանակագրական մեծ ճշգրտութիւնն էին պատճառ, որ խրախուսեցին զիս զայս թարգմանել: Այդ տեղեկութեանց առաջին երեսներում կարելի է զանել երկրային զրախախ տեղեկագրութեան հետաքրքրելի նկարագրութիւնը, որոյ աղքիւրը զեռ ևս ճշգրտել չեմ կարողացեր, թուովմասի յատկութիւններից մինն ևս այն է, որ ընտիր ոճ ունի և լաւ մշակուած է, չնայելով որ շատ սեթեւեթեալ է և լի Աստուածաշնչի վկայութիւններով, որոց առաւելութիւնը փոքր ինչ պակասեցնել յուսամ կներուի ինձ, երբ նա ամրող երեսներ վկայութիւններով կցուցանէ: Քաց յայգմանէ Թովմաս Արծրունին շատ հետաքրքիր հնախօս է, և ինքն անձամբ ականատես է, եղեր այնմ ամենայնի որոց վերայ պատմական կերպիւ խօսում է, և մանրամասնորէն և մեծ ու շաղրութեամբ պատմում է զնիքի, զննուորական ճակա-

տայարդարութեան և այն ժողովրդի կամցից զերի բարուց վերայ, որոնք նորա պատմութեան նիւթքն են ընտրուած: Խոր պատմութեան ձեռազիրները շատ հազուազիւտ են և զրեանց ու զիսոց թւով և բաժանմամբ շատ տարբեր միմեանցից: Այս բոլոր աարբերութիւնքը թարգմանութեան ծանօթութեանց մէջ ինշանակուին:

Ա. Դահիբագուանի:

Ա. Պէտրէ բուլգարի:

ԲԵՆԻԱՄԻՆ ՖՐԱՇԿԵԼԻՒ

Կ Ե Ա Ն Ք Ը.

(Յուրաքանչյուրինան:)

Զ.

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵԱՏԻԹԻՒՆԸ ԼՕՆՏՕՆԻ ՄԷԶԱ

Ինչպէս որ Փենսիլվանիան, նոյնպէս և միւս տասներկու անզլիական գաղթականութիւններն Ամերիկայի մէջ ծանր փորձանքներու հանգիպելու էին շուտով: Կոցա մայրենի երկիրը, որմէն որ զաղթուած էին, Անգլիան էր. սակայն և այնպէս Ամերիկայի մէջ հաստատուելն սկսեալ նոքառուշեալ իրաւունքներ և ազատութիւններ ունեին: Գէորգ Գ. անզլիական թագաւորի պաշտօնեաները, կամեցան խլել այս իրաւունքներն ու ազատութիւնքը Ամերիկացիներու ձեռքեւն:

Վմեն տասներեկը գաղթականութեանց վրայ կամայօրէն հարկ զրուեցաւ, այնինչ առանց աղղային պատպամաւորաց որոշմանը հարկ զնել օրէնքով արգելուած էր: